ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
կոլեգիայի 2015 թվականի մարտի 30-ի նիստի

ք.Երևան

<< 30>> մարտի 2015 թ
ժամը 17.30-19.30

Մասնակցում էին՝
Կոլեգիայի անդամներ

Խոսրով Հարությունյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, Հայաստանի Հանրապետության հանրային խորհրդի անդամ
Յուրա Ջավադյան	<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ի տնօրեն, Հայաստանի Հանրապետության հանրային խորհրդի անդամ
Գրիշա Բաղիյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ
Սամվել Գալստյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Գառնիկ Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ռոբերտ Մակարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Արմեն Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Արտաշես Կիրակոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար
Ռոզա Ծառուկյան	Ֆերմերների ազգային միավորման /ՖԱՄ/ նախագահ
Հասմիկ Ջհանգիրյան	Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Սարդարյան	<<Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամի>> տնօրեն
Երվանդ Թարվերդյան	<<Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միություն>> իրավաբանական անձանց միության նախագահ
Ավագ Հարությունյան	<<Հայ գինեգործների միություն>> իրավաբանական անձանց միության նախագահ
Վարդան Համբարձումյան	<<Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա>> իրավաբանական անձանց միության /ԳԱՖ/ նախագահ

Հրավիրված էին՝

Արմեն Հայրապետյան	ՀՀ Գն սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ
Գագիկ Խաչատրյան	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար
Աշոտ Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի խորհրդական
Վարդան Բարսեղյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի խորհրդական
Հողմիկ Եղիազարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի խորհրդական
Անի Սմբատյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի մամուլի քարտուղար
Վարդան Ղուշչյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության պետ

Անդրանիկ Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
Կարեն Ավետիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ
Արսեն Ավետիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Արթուր Բաղդասարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի հողերի օգտագործման և մելիորացիայի վարչության պետ
Գևորգ Ղազարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ագրովերամշակման զարգացման վարչության պետ
Կարեն Փահլևանյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչության պետ
Կարինե Եսայան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության այգեգործության զարգացման և բույսերի պաշտպանության բաժնի պետ
Սոֆի Սիմոնյան	Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Վլադիմիր Մանուկյան	<<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն
Ռուբիկ Կարախանյան	<<Գյումրիի սելեկցիոն կայան>> ՓԲԸ-ի տնօրեն
Աբրահամ Ղուկասյան	<Երկրագործության գիտական կենտրոն> ՊՈԱԿ-ի տնօրեն
Գայանե Սարգսյան	<<Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն
Հովհաննես Գաբոյան	ՀՀ Շիրակի մարզի ֆերմեր
Վռամ Գյուրզադյան	ՀՀ Լոռու մարզի ֆերմեր
Արարատ Թանգյան	ՀՀ Սյունիքի մարզի ֆերմեր
Գագիկ Խաչատրյան	ՀՀ Սյունիքի մարզի ֆերմեր

Սերմնաբուծության և սերմարտադրության ծրագրերի իրականացման ընթացքի, արդյունքների և առաջիկա խնդիրների մասին

Ս. Գալստյանն իր զեկույցում նշեց, որ հանրապետության բուսաբուծության ճյուղի արդյունավետության և զարգացման ապահովման կարևոր նախապայմանը սերմնաբուծության, սերմնապահած կայուն և գործուն համակարգի առկայությունն է: Տարիներ շարունակ ֆերմերային տնտեսությունների կողմից օգտագործվում էր սեփական արտադրության, անհայտ ծագման և վերարտադրության սերմացուներ, տարեցտարի նվազում էր հացահատիկի ցանքատարածություններն ու համախառն բերքը, ցածր էր բերքատվությունը, արդյունքում նվազում էին հողօգտագործողների եկամուտները: Հանրապետությունում պարենային ապահովության բարձրացման, հացահատիկի և կերարտադրության ծավալների ավելացման համար անհրաժեշտություն էր առաջացել հացահատիկային և կերային մշակաբույսերի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններին ապահովել բարձր վերարտադրության, որակյալ սերմացուներով: ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ սկսած 2010 թվականից

ՀՀ կառավարության կողմից հաստատվել են մի շարք ծրագրեր, որոնք միտված են հանրապետությունում հացահատիկային և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների, արտադրության ծավալների ավելացմանը և պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության ու սերմարտադրության զարգացման և 2012-2017, 2013-2018 թվականներին աշնանացան ցորենի սերմնաբուծության, բարձր վերարտադրության սերմերի արտադրության զարգացման ծրարգերի շրջանակներում՝ Ռուսաստանի Դաշնությունից ներկրվել է աշնանացան ցորենի 3240 տ էլիտային վերարտադրության սերմացու՝ 1մլդ 38.6 մլն. դրամ արժեքով, 1 կգ՝ 320.5 դրամով և 40 տ սուպերէլիտային վերարտադրության՝ 19.2 մլն. դրամ արժեքով, 1 կգ՝ 480 դրամով: Տեղական սերմարտադրողներից գնվել է՝ 403.9 տ էլիտային վերարտադրության սերմացու 80.3 մլն. դրամ արժեքով, 1 կգ՝ 199 դրամով: 2010-2014 թվականներին Ռուսաստանի Դաշնությունից ներկրված 3240 տ և տեղական սերմարտադրողներից գնված՝ 403.9 տ, ընդամենը՝ 3643.9 տ էլիտային սերմացուն հատկացվել է ՀՀ մարզերի 7 և ավելի հա հողատարածք ունեցող 774 շահառուների (115-ը հետվերադարձը չեն ապահովել), որոնք 1:2 փոխհարաբերությամբ հետ են վերադարձրել 5749.2 տ 1-ին վերարտադրության սերմացու: 2010-2014 թվականներին ծրագրում ընդգրկված շահառուներից գնվել է 8330.7 տ 1-ին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու՝ 1 549,9 մլն դրամ արժեքով , 1 կգ՝ 186 դրամով: Ռուսաստանի Դաշնությունից ներկրված 3240 տ էլիտային, 40 տ՝ սուպերէլիտային, տեղական սերմարտադրողներից ձեռք բերված 403.9 տ էլիտային և ծրագրում ընդգրկված շահառուներից գնված 8330.7 տ 1-ին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացուների գնման արժեքը կազմել է՝ 2 688 մլն դրամ, իսկ ծրագրի իրականացման համար ընդամենը ծախսվել է 2 907.9 մլն դրամ, որից 219.9 մլն դրամը կազմել է ԱԱՀ-ի, մաքսային ձևակերպումների, բեռնաթափման-բեռնման, մարզեր բեռնափոխադրման և այլ ծախսերը: 2011-2014 թվականների աշնանը հողօգտագործողներին հատկացված 1-ին վերարտադրության սերմացուների դիմաց վճարման ենթակա գումարը կազմել է 2 252.9 մլն դրամ, որից 2015 թվականի մարտի 20-ի դրությամբ վճարվել է 1 298.6 մլն դրամ, պարտքը կազմել է 954.3 մլն. դրամ, որից 674.1 մլն. դրամը կվճարվի ընթացիկ տարվա բերքահավաքից հետո, 114.6 մլն. դրամի վերադարձման հարցը (ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում կարկտահարության պատճառով) կքննարկվի 2015 թվականի հուլիսին, իսկ 165.6 մլն. դրամ պարտքի մարման նպատակով իրականացվող վճարումների գործընթացը շարունակվում է: Վճարման վերջնաժամկետ է սահմանվել 2015 թվականի ապրիլի 1-ը: Մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարած հողօգտագործողներին ծրագրի շահառուներից միջինը 186 դրամ արժեքով գնված 1 կգ 1-ին վերարտադրության սերմացուն հատկացվել է 160 դրամով, կամ 1 կգ սերմացուն սուբսիդավորվել է 26 դրամով: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 366.1 մլն. դրամ: Հանրապետությունում 2013 թվականին աշնանացան ցորենի ցանքատարածություններն կազմել են 102.3 հազ. հա, 2014 թվականին՝ 107.6 հազ հա, որի համար համապատասխանաբար օգտագործվել է 30.7 և 32.3 հազ. տ սերմացու, որը կազմում է 2013 և 2014 թվականներին արտադրված ցորենի համախառն բերքի շուրջ 10 %-ը: Հանրապետությունում ծրագրի շրջանակներում ներկրված բարձր վերարտադրության սերմացուների բազմացման արդյունքում աշնանացան ցորենի սերմացուի 70-75 տոկոսը սորտաթարմացվել է: 2011-2014 թվականներին հետ վերադարձված և գնված 14079.9 տ 1-ին վերարատադրության սերմացուներով կատարվել է 46933 հա ցանք՝ ապահովելով 187.7 հազ տ համախառն բերք, շուրջ 40 ց/հա միջին բերքատվությամբ: ՀՀ Արմավիրի, Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի ծրագրերում ընդգրկված սերմարտադրողների ջրովի ցանքատարածություններում բերքատվությունը կազմել է 60-90 ց/հա: 2010 թվականին հացահատիկ և հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքատարածությունը կազմել է՝ 157.6 հազ. հա, համախառն բերքը՝ 326.4 հազ. տ, միջին բերքը՝ 20.7 ց/հա, իսկ 2014 թվականին՝ ցանքատարա-

ծությունը կազմել է 185.7 հազ. հա, համախառն բերքը՝ 590.5 հազ. տ, միջին բերքը՝ 31.8 ց/հա, նախորդ տարվա համեմատությամբ ավելի է արտադրվել 264.1 հազ. տ կամ համախառն բերքի ծավալն ավելացել է 80.9 %-ով, իսկ ցանքատարածությունը՝ 28.1 հազ. հեկտարով: 2010 թվականին ցորենի ընդհանուր ցանքատարածությունը կազմել է՝ 87.6 հազ. հա, որից պահպանվածը՝ 86.6 հազ. հա, աշնանացան ցորենի ընդհանուր ցանքերը՝ 81.7 հազ. հա, պահպանվածը՝ 80.8 հազ. հա, ցորենի համախառն բերքը կազմել է 183.5 հազ. տ, որից աշնանացանինը՝ շուրջ 171.0 հազ. տ, միջին բերքը՝ 21.2 ց/հա, իսկ 2014 թվականին՝ ընդհանուր ցանքատարածությունը կազմել է՝ 106.3 հազ.հա, պահպանվածը՝ 104.8 հազ. հա, որից աշնանացան ցորենի ընդհանուր ցանքերը՝ 102.3 հազ. հա, պահպանվածը՝ 100.7 հազ. հա, ցորենի համախառն բերքը կազմել է 338.2 հազ. տ, որից աշնանացանինը՝ 325.8 հազ. տ, միջին բերքը՝ 32.3 ց/հա, նախորդ տարվա համեմատությամբ ավելի է արտադրվել 154.7 հազ. տ կամ համախառն բերքի ծավալը կազմել է 84.3 %, իսկ ցանքատարածությունն ավելացել է՝ 18.2 հազ. հա-ով: Ցորենի ինքնաբավության մակարդակը բարձրացել է 32 %-ով և 2014 թվականին կազմել է շուրջ 51 %: Նշված ծրագրերը նպաստել են նախարարության համակարգի գիտական կենտրոնների և մասնավոր սերմարտադրողների միջոցով տեղական սերմնաբուծության և սերմարտադրության զարգացմանը:

ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N165-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման» ծրագրերի իրականացման համար պետական բյուջեից նախատեսվել էր հատկացնել 615,9 մլն դրամ, իսկ 87,5 մլն դրամը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվից: Ծրագրի իրականացման համար ընդամենը ծախսվել է 666,7 մլն դրամ: Տնտեսվել է 36,7 մլն դրամ: Ռուսաստանի Դաշնությունից ներկրվել է գարնանացան գարու սերմացու 700 տոննա, 238 մլն դրամ արժեքով, 1 կգ 340 դրամով, հողօգտագործողներին վաճառվել է՝ 130 դրամով, սուբսիդավորվել է՝ 210 դրամ, եգիպտացորենի սերմացու 9.5 տոննա, 5,5 մլն դրամ արժեքով, 1կգ 583 դր., վաճառվել է 350 դրամով, սուբսիդավորվել է՝ 233 դրամ, առվույտի սերմացու 52,1 տոննա, 129,8 մլն դրամ արժեքով, 1 կգ 2493 դրամ, վաճառվել է 1500 դրամով, սուբսիդավորվել է՝ 993 դրամ, կորնգանի սերմացու 360 տոննա, 226,1 մլն դրամ արժեքով, 1 կգ 628 դրամ, վաճառվել է 370 դրամով, սուբսիդավորվել է՝ 258 դրամ: Տեղական սերմարտադրողներից գնվել է 150 տոննա գարնանացան գարու սերմացու 30 մլն դրամ արժեքով, 1 կգ 200 դրամով, վաճառվել է՝ 130 դրամով, սուբսիդավորվել է 70 դրամ, կորնգանի 40 տոննա սերմացու՝ 23,8 մլն դրամ արժեքով, 1 կգ 594 դրամով, վաճառվել է՝ 370 դրամով, սուբսիդավորվել է 224 դրամ: Սուբսիդավորման ընդհանուր գումարը սերմացուների համար կազմել է 293,7 մլն դրամ, որից գարնանացան գարու համար՝ 147 մլն դրամ, եգիպտացորենի համար՝ 2,2 մլն դրամ, առվույտի համար՝ 51,7 մլն դրամ, կորնգանի համար՝ 92,8 մլն դրամ: Սերմացուների դիմաց վճարումները կատարվել են ամբողջությամբ:

Ս. Գալստյանն իր զեկույցում նշեց նաև, որ ներկայումս նախատեսվում է առաջիկայում սորտաթարմացում իրականացնել նաև կարտոֆիլագործության բնագավառում, արտերկրից կարտոֆիլի բարձր վերարտադրության տնկանյութ ներկրելու միջոցով:

Հանրապետությունում բանջարաբոստանային մշակաբույսերի սերմերի պահանջարկը հիմնականում բավարարվում է արտերկրից ներմուծվող սերմերի հաշվին: 2013 թվականի հանրապետություն է ներմուծվել 35.2 տ տարբեր բանջարաբոստանային մշակաբույսերի սերմեր, իսկ 2014 թվականին՝ 29.4տ: Տարեցտարի ավելանում է հողօգտագործողների հետաքրքրությունը բանջարեղենի՝ հատկապես լոլիկի տեղական սորտերի նկատմամբ: Բանջարեղենի սերմնաբուծությամբ հիմնականում զբաղվում է նախարարության

համակարգում գործող «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը տարեկան արտադրում է 400-500 կգ բարձր վերարտադրության բանջարեղենի (լոլիկ, վարունգ, տաքդեղ՝ կծու և քաղցր, սմբուկ և այլն) տեղական սորտերի սերմեր, որն ամբողջությամբ իրացվում է:

Վերը նշված և հողօգտագործողներին հատկացվող մի շարք պետական աջակցության շարունակական ծրագրերի (մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի, դիզելային վառելանյութի տրամադրում, սերմացուների գների և վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում) իրականացման արդյունքում 2014 թվականին բուսաբուծական համախառն արտադրանքը կազմել է 605.7 մլդ. դրամ, 2010 թվականի 393.0 մլդ. դրամի դիմաց, իսկ ցանքատարածությունները՝ 2010 թվականի համեմատությամբ ավելացել են 49.2 հազ. հեկտարով կամ շուրջ 17 %-ով: 2015 թվականին կանխատեսվում է ցանքատարածությունների ծավալների ավելացում 14.5-15.5 հազ. հեկտարով:

Առաջարկություններ

Խ. Հարությունյան՝

1. անհրաժեշտ է մշակել սերմարտադրողների գործունեության խթանմանն ուղղված միջոցառումների ծրագիր,

2. առանձնակի ուշադրություն դարձնել սերմնաբուծության և սելեկցիայի բնագավառում գիտական աշխատանքների իրականացմանը,

3. ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ սորտափորձարկումներ իրականացնելու նպատակով սերմնաբուծությամբ զբաղվող գիտական կազմակերպություններին հողատարածքներ հատկացնելու վերաբերյալ:

Ռ. Ծառուկյան՝

ներկայացնել առաջարկություն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ սերմնաբուծության գծով ասպիրանտուրայում հատկացվող տեղերի քանակությունն ավելացնելու վերաբերյալ:

Ե. Թարվերդյան՝

տեղական արտադրության ալյուրի իրացումը խթանելու նպատակով հսկողություն իրականացնել հանրապետություն ներկրվող ալյուրի ծավալների նկատմամբ:

Յ. Ջավադյան՝

միջոցներ ձեռնարկել հանրապետության անջրդի տարածքներն ոռոգելի դարձնելու ուղղությամբ, այդ տարածքներում սերմնաբուծությունը զարգացնելու համար:

Գ. Սայադյան՝

1.միջոցներ ձեռնարկել հանրապետությունում կարտոֆիլի տնկանյութի արտադրության զարգացման կայուն համակարգ ստեղծելու ուղղությամբ:

Գ. Բաղիյանը նշեց, որ սերմնաբուծության և սերմարտադրության ծրագրերն արդյունավետությամբ են իրականացվում: Արդյունքում յուրաքանչյուր տարի 11-14 տոկոսով ավելացել է չօտագործվող հողերի մշակության ծավալները:

Ս. Կարապետյանը նշեց, որ սերմնաբուծության և սերմարտադրության ծրագրերը բաղկացած են 2 բաղադրիչից: 1-ին բաղադրիչի նպատակը սոցիալական է, որի շրջանակներում բարձրլեռնային և նախալեռնային գոտու բնակիչներին տրամադրվում են սերմացուներ նրանց զբաղվածությունն ապահովելու համար: 2-րդ բաղադրիչն ուղղված է հանրապետությունում սորտաթարմացման միջոցով սերմարտադրության զարգացմանը: Հանրապետությունում ծրագրի շրջանակներում ներկրված բարձր վերարտադրության սերմացուների բազմացման միջոցով աշնանացանի համար անհրաժեշտ է ցորենի սեմացուի 70-75 տոկոսը սորտաթարմացվել է: Ներկայումս հանրապետությունում հացահատիկի ինքնաբավության մակարդակը կազմում է 51 տոկոս: **2015 թվականի** բերքահավաքից հետո ծրագրում ընդգրկված շահառուների կողմից հետ կվերադարձվի 527,6 տ աշնանացան ցորենի 1-ին վերատադրության սերմացու և 2015 թվականի աշնանացանի համար ՀՀ մարզերից ստացված հողօգտագործողների վճարունակ պահանջարկի հիման վրա ծրագրում ընդգրկված շահառուներից կիրականացվի համապատասխան քանակությամբ սերմացուների գնում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014 թվականին ծրագիրն ավարտվել է և պետական բյուջեով այդ նպատակների համար 2015 թվականին գումար նախատեսված չէ <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի նպատակային հաշվեհամարներում առկա միջոցների հաշվին Ռուսաստանի Դաշնության Կրասնադարի մարզի Լուկյանենկոյի անվան գիտահետազոտական ինստիտուտից 50 տ աշնանացան ցորենի սուպերէլիտային վերարտադրության սերմացուն ձեռք կբերվի և կներկրվի Հայաստանի Հանրապետություն:

Ս. Կարապետյանը նշեց նաև, որ ծրագրերի շրջանակներում հացահատիկային մշակաբույսերի 450 տոննա սերմացուներ են հատկացվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ենթակայությամբ գործող գիտական կազմակերպություններին՝ <<Գյումրիի սելեկցիոն կայան>> ՓԲԸ-ին, <<Երկրագործության գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ին, որոնք հաջողությամբ իրականացրել են սելեկցիայի բնագավառի աշխատանքներ: Ծրագրի իրականացումը խթանել և նպաստել է գյուղացիական կոոպերատիվների զարգացմանը:

Քննարկումից հետո որոշվեց՝

Հավանություն տալ սերմնաբուծության բնագավառում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից վարող քաղաքականությանը:

Կոլեգիայի նախագահ Ս. Կարապետյան

Կոլեգիայի քարտուղար Գ. Բաղալյան